

**Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի  
անցկացման բանավոր փուլի առարկայական հարցաշարեր**

**Հայոց լեզու և գրականություն**

1. Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզվաընտանիքում: Նշվածներից ո՞ր լեզուները չեն պատկանում հնդեվրոպական լեզվաընտանիքին. լատիշերեն, քրդերեն, աբխազերեն, վրացերեն, տաջիկերեն, ֆիններեն, շվեդերեն, հունգարերեն, էստոներեն, ալբաներեն, օսեթերեն, վիետնամերեն:

2. Թվարկել հայերենի ձայնորդ, ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնները: Ի՞նչ է ձայնակապը. ո՞ր դեպքում է այն գրվում:

3. Հայերենում շեշտը ինչպիսի՞ն է: Բերել մի քանի դեպքեր, երբ շեշտը չի դրվում վերջին վանկի ձայնավորի վրա: Եթե բառը վերջանում է և տառով, շեշտը որտե՞ղ է դրվում:

4. Նշել *հանդգնել, լուսնաշրջան, ծնրադրել, հոգեդատրիկ, թռչնաբուծություն* բառերում կատարված հնչյունափոխության բոլոր դեպքերը:

5. Թվարկել 4 բառ, որոնց մեջ կատարվել է ածանցի հնչյունափոխություն: Վերլուծել բառակազմորեն:

6. Թվարկել 4 բառ, որոնցում կատարվել է երկհնչյունի հնչյունափոխություն: Վերլուծել բառակազմորեն:

7. Որո՞նք են կոչվում համաձանցավոր բառեր: Բառավերջի ի հնչյունը բառաբարդման և ածանցման ժամանակ ի՞նչ հնչյունափոխության կարող է ենթարկվել: Բերել օրինակներ:

8. Նշել ու ձայնավորի հնչյունափոխության բոլոր դեպքերը:

9. Բերել ի, ը ձայնավորների սղման մի քանի օրինակ:

10. Օրինակներով նշել ույ երկհնչյունի հնչյունափոխության բոլոր դեպքերը:

11. Ի՞նչ են նշանակում *հակամետ, համետ, ակրատ, գայլիկոն, մեղանչել, վարմ* բառերը:

12. Հայերեն տառերի թվային արժեքը: Որոշել թվային արժեքը. ԶՂԹ, ՊԶԶ, ՆՀԲ, ՅԿԵ: Առաջին երկուսի արժեքը գրել տառերով:

13. Աչք բառով կազմել 5 դարձվածք և բացատրել իմաստները:

14. Քանի՞ տեսակ են լինում բառերը ըստ ձևափմաստային հարաբերության: Բերել օրինակներ: Նշել *ակնարկ, անարգել, շառափ, հազար, գանձ, թոռ* համանունների իմաստները:

15. Ի՞նչ խմբերի են բաժանվում հայերենի խոսքի մասերը: Ինչպե՞ս է կազմվում գոյականի հոգնակի թիվը: Նշել բացառությունները:

16. Կազմել *ծեռագիր և մատենագիր, դեղատուն և մեծատուն, հանքափոր և հանքահոր* բառերի հոգնակին:

17. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:

18. Գոյականի հոլովները:

19. Ուղղական և սեռական հոլովների շարահյուսական կիրառությունը:

20. Տրական և հայցական հոլովների շարահյուսական կիրառությունը:

21. Բացառական, գործիական, ներգոյական հոլովների շարահյուսական կիրառությունը:

22. Արտաքին, ներքին և այլաձև հոլովումներ:

23. Նշել համեմատության աստիճան չունեցող 10 որակական ածական:

24. Թվական անուն: Տեսակները:

25. Դերանուն: Տեսակները:

26. Անձնական դերանուն: Դերանվանական հոլովում: Նախադասությունների մեջ հոլովել *դու* դերանունը՝ նշելով շարահյուսական պաշտոնը յուրաքանչյուրում:

27. Դերանվանական հոդեր:

28. Բայի կազմությունը: Բայածանցներ:

29. Բազմապատկական բայեր: Բերել օրինակներ: Նշվածներից ո՞ր բայերը բազմապատկական չեն. *թռչկոտել, կոտորատել, թեփոտել, մրոտել, պոկոտել, ցատկոտել, ժանգոտել, վազվզել*:

30. Բայի սեռը:

31. Դերբայներ և ձևաբայեր:

32. Անկախ դերբայներ: Անորոշ դերբայի շարահյուսական կիրառությունը:

33. Ենթակայական և համակատար դերբայներ: Շարահյուսական կիրառությունը:

34. Հարակատար դերբայ: Շարահյուսական կիրառությունը:

35. Բայի ձևաբանական հատկանիշները:

36. Սահմանական եղանակ: Ժամանակաձևերը:

37. Ըղծական և ենթադրական եղանակ:

38. Հրամայական և հարկադրական եղանակ:

39. Բայի պարզ և բաղադրյալ ժամանակային ձևերը:

40. Անկանոն և պակասավոր բայեր:

41. Մակբայներ: Տեսակները: Մակբայներին հարաբերակից դերանուններ:

42. Կապ: Տեսակները:

43. Շաղկապ: Տեսակները:

44. Վերաբերական: Տեսակները:

45. Ենթակա: Նրա արտահայտությունը:

46. Ստորոգյալ: Տեսակները:

47. Գոյականական անդամի լրացումներ:

48. Բայական անդամի լրացումներ:

49. Օրինակներով ցույց տալ, թե ինչ փոփոխություններ են կատարվում բարդ ստորադասական նախադասության պարզեցման ժամանակ:

50. Բերել ենթակա և ստորոգելի, ուղիղ խնդիր և հանգման խնդիր ստորադաս նախադասությունների օրինակներ:

1. Ե՞րբ է սկզբնավորվել հայ գրականությունը և ի՞նչ շրջափուլեր ունի:

2. Հայ հին բանահյուսությունից ի՞նչ նմուշներ են հասել մեզ, ո՞ւմ շնորհիվ, և ի՞նչ աղերսներ ունեն հայոց դիցարանի հետ:

3. Հեթանոս աստվածները և նրանց պաշտամունքային վայրերը:

4. Անգիր իմանալ դասագրքում զետեղված բանահյուսական նմուշները գրաբարով և աշխարհաբարով: 9-րդ դասարան, Դավիթ Գասպարյան

5. Ո՞վ և ինչպե՞ս է ստեղծել հայ գրերը, ո՞վ է նրա կենսագիրը: Քաղաքական ի՞նչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար գրերի գյուտը:

6. Հայ գրողներից ովքե՞ր են անդրադարձել Մեսրոպ Մաշտոցի կերպարին: Նշել առնվազն հինգ բանաստեղծություն և հինգ ասույթ՝ նվիրված հայոց լեզվին և Մեսրոպ Մաշտոցին:

7. 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը: Ինչպե՞ս է կոչվում 5-րդ դարը, ինչո՞ւ: Ովքե՞ր են 5-րդ դարի հեղինակները և ի՞նչ երկեր են գրել:
8. Ի՞նչ հատկանիշներով է առանձնանում Մովսես Խորենացու « Հայոց պատմությունը» հինգերորդ դարի պատմագրության մեջ: Վերլուծել Խորենացու «Ողբը»: Անգիր իմանալ առնվազն երկու հատված:
9. Ե՞րբ է ձևավորվել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը /էպոսը/ և քանի՞ մասից է կազմված: Բնութագրել գլխավոր հերոսներին և կազմել տոհմածառը: Ի՞նչ գրական մշակումներ է ունեցել էպոսը: Անգիր իմանալ հատվածներ:
10. Վերլուծել «Մատյան ողբերգության» պոեմը: Արտասանել հատված:
11. Ի՞նչ է առակը: Ովքե՞ր են միջնադարյան առակագիրները, ինչպե՞ս են կոչվում նրանց ստեղծագործությունները, բերել օրինակներ և մեկնաբանել:
12. Ո՞վ է հայ միջնադարյան քնարերգության վերջին ներկայացուցիչը, ի՞նչ թեմաներով է ստեղծագործել /նշել խաղերի անվանումներ., Հ. Թումանյանը ինչպե՞ս է բնութագրել նրան:
13. Հայկական հայտնի ի՞նչ կրթօջախներ կան / նշել հինգ կրթօջախի անուն/: Ե՞րբ են հիմնադրվել և որտե՞ղ:
14. Ի՞նչ գրական ուղղություններ կան հայ գրականության մեջ /նշել հիմնական առանձնահատկությունները և ներկայացուցիչները հայ գրականության մեջ/:
15. Ո՞վ է հայ նոր գրականության հիմնադիրը: Իր հայտնի վեպում նա նոր գրականության զարգացման ի՞նչ ուղիներ մատնանշեց:
16. Ի՞նչ է ասում Ռաֆֆին պատմավեպի մասին: Որո՞նք են նրա ծրագրային վեպերը, ինչո՞ւ են դրանք կոչվում ծրագրային:
17. «Սամվել» վեպի գաղափարը, կերպարները:
18. Ե՞րբ և ինչո՞ւ են առաջացել արևելահայ և արևմտահայ գրական լեզուները:
19. Ի՞նչ արևմտահայ գրողներ կան /նշել տասը գրողների անուններ և նրանց ստեղծագործությունների ու ժողովածուների վերնագրերը/:
20. Ի՞նչ է երգիծանքը և հումորը, ի՞նչ երգիծական գործեր կան հայ գրականության մեջ:
21. Ի՞նչ է վեպը, ինչո՞վ է տարբերվում պատմվածքից, վիպակից և նովելից, բերել յուրաքանչյուրից օրինակ:
22. Որո՞նք են «Գևորգ Մարգալետունի» վեպի պատմական աղբյուրները, դարաշրջանը, ինչո՞ւ է վիպասանը դիմել պատմական անցյալին:
23. Արդյունաբերական մեծ քաղաքի կյանքը Ալ. Շիրվանզադեի ո՞ր ստեղծագործության մեջ է ներկայացված /նկարագրել կոնֆլիկտը և բնութագրել հերոսներին/:
24. Թվարկել նորավեպի ժանրային առանձնահատկությունները և նշել Գ. Ջոհրապի նորավեպերի ժողովածուների վերնագրերը:
25. Ի՞նչ է գրել Հ. Թումանյանը քառյակների մասին, ի՞նչ զգացումներ ու խոհեր են արծարծված դրանց մեջ / արտասանել քառյակներից/:

26. «Անուշ» պոեմի բովանդակությունը և հերոսների հոգեբանությունը: Արտասանել հատվածներ:
27. Ավ. Իսահակյանի քնարերգությունը: Արտասանել երեք բանաստեղծություն:
28. Ի՞նչ է հաստատում և ի՞նչ է ժխտում Աբու- Լալա Մահարին իր մենախոսության մեջ: Համեմատության ի՞նչ եզրեր ունեն «Համբերանքի չիբուխի» Օհան ամին և Աբու Մահարին:
29. Ավ. Իսահակյանի արձակը:
30. Ո՞վ է Տերյանի քնարական հերոսը, որո՞նք են նրա ստեղծած քնարական շարքերը: Արտասանել երեք բանաստեղծություն:
31. Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման, կերպարները:
32. Դ.Դեմիրճյանի արձակը: «Վարդանանք»:
33. Սիամանթո, «Հոգեվարքի և հույսի ջահեր» ժողովածուի վերլուծություն, շարքից արտասանել մեկ բանաստեղծություն:
34. Դանիել Վարուժան, վերլուծել «Ցեղին սիրտը» ժողովածուն, արտասանել «Ձոն» բանաստեղծությունը:
35. Ստեփան Չորյանի ստեղծագործությունը /Սխուր մարդիկ, Յանկապատ, Պատերազմ, Իսնձորի այգին/:
36. Վերլուծել Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը: Արտասանել հատված:
37. Ի՞նչ է խորհրդանշում Շահնուրի վեպի վերնագիրը՝ «Նահանջը առանց երգի»:
38. Գուրգեն Մահարի, «Այրվող այգեստաններ» վեպի վերլուծությունը:
39. Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: Արտասանել հատված:
40. Հայ գրականության մեջ ցեղասպանության ի՞նչ ստեղծագործություններ կան /թվարկել հինգ ստեղծագործություն/:
41. Ե. Չարենցի քնարական բանաստեղծությունները:
42. Ե. Չարենց: «Դանթեական առասպել», «Վահագն»:
43. Հովհաննես Շիրազի «Բիբլիական» պոեմի վերլուծությունը: Արտասանել հատված:
44. Համո Սահյանի քնարերգությունը: Արտասանել և վերլուծել «Ախր ես ինչպես վեր կենամ գնամ» բանաստեղծությունը:
45. Պարույր Սևակի կյանքը, «Վարք մեծաց» բանաստեղծության վերլուծություն և արտասանություն:
46. Պ. Սևակի սիրային քնարերգությունը: Արտասանել երկու բանաստեղծություն:
47. Պ. Սևակի հայրենասիրական քնարերգությունը: Արտասանել երկու բանաստեղծություն:
48. Հրանտ Մաթևոսյանի կյանքը և ստեղծագործությունը: Վերլուծել «Աշնան արև» վիպակը:

49. Սփյուռքահայ գրողներ /Հակոբ Օշական, Վահան Թեքեյան, Հակոբ Մնձուրի, Համաստեղ, Մուշեղ Իշխան/:

50. Օտարագիր հայ գրողներ:

Գրականություն

Հայ գրականության դասագրքեր՝ 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ  
**Տարրական դպրոց**

1. Որո՞նք են նախաայբբենական փուլում աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները:

2. Որո՞նք են գրաձանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները:

3. Ո՞րն է դասի խթանման փուլի նպատակը:

4. Ի՞նչ նյութեր կարելի է ընտրել գրաձանաչության դասերին գրական ունկնդրման ժամանակ:

5. Որո՞նք են մայրենիի բանավոր հարցման ենթատեսակները

6. Ի՞նչ են սովորում երեխաները քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում :

7. Ինչպիսի՞ վարժություններ է ընդգրկում լեզվական վարժությունների համակարգը:

8. Թվարկել խոսքի տեսակներն ըստ նշանակության :

9. Որո՞ք են բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը

10. Որո՞նք են զրույցի տեսակներն ըստ նպատակների:

11. Որո՞նք են կարդալու որակական հատկանիշները:

12. Ի՞նչ ենք հասկանում ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով:

13. Ի՞նչ ենք հասկանում գիտակցորեն կամ հասկանալով կարդալ ասելով:

14. Ի՞նչ ենք հասկանում վարժ կամ սահուն կարդալ ասելով :

15. Որո՞նք են պատմելու տեսակները:

16. Որո՞ք են զրույցի տեսակներն ըստ անցկացման ձևի :

17. Թվարկել խոսքի տեսակներն ըստ արտաբերման եղանակի և նշել դրանց առանձնահատկությունները :

18. Բնագրի շուրջ աշխատանքը որպես ընթերցողական կարողության ձևավորման միջոց և նրա խնդիրները :

19. Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման սահմանները տարրական դասարաններում :

20. Գաղափար վերնագրի մասին :

21. Բառի գեղարվեստական արժեքի ըմբռնում :
22. Ո՞րն է դասի իմաստի ընկալման փուլի նպատակը:
23. Ի՞նչ է տեքստը :
24. Ի՞նչ է թեման :
25. Որո՞ք են գրույցի տեսակներն ըստ դասի ժամանակ իրականացման փուլերի:
26. Ի՞նչ դեր ունեն լեզվաարտահայտամիջոցները տարրական դասարանների մայրենիի դասընթացում տարրական դասարանների մայրենիի դասընթացում :
27. Գրական ժանրերի դերը տարրական դասարանների մայրենիի դասընթացում :
28. Ինչպե՞ս ձևավորել կարդացած ստեղծագործության ենթատեքստի կռահման կարողությունը:
29. Ի՞նչ է հարցաշարը, Ի՞նչ պետք է անել հարցաշար կազմելու կարողության ձևավորման աշխատանքներն իրականացնելիս :
30. Ինչի՞ց է կազմված բնագիրը :
31. Որո՞նք են բնագրի շուրջ տարվող աշխատանքի քայլերը:
32. Լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերման ի՞նչ եղանակներ կան:
33. Աշակերտների խոսքի զարգացման ի՞նչ ակտիվ մեթոդներ կան :
34. Բառապաշարի զարգացման ի՞նչ մեթոդներ կան :
35. Ո՞րն է դասի կշռադատման փուլի նպատակը:
36. Բանավոր խոսքին ներկայացվող ի՞նչ պահանջներ կան :
37. Ի՞նչ է ընկած տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկայի հիմքում :
38. Տարրական դասարաններում մեծությունների չափման ուսուցումը հնարավորություն է տալիս`
39. Տարրական դասարաններում մաթեմատիկայից մեծությունների ուսուցումը նպաստում է`
40. Մետրի հասկացությունը տալու նպատակով ուսուցիչը նախօրոք ի՞նչ պետք է հանձնարարի :
41. Ի՞նչ պետք է անել աշակերտների մեջ թույլի և և ժամի մասին պատկերացումներ ստեղծելու նպատակով
42. Ինչո՞վ է որոշվում մաթեմատիկայի տարրական դասընթացի բովանդակությունը :
43. Տարրական դպրոցում մաթեմատիկա դասավանդող ուսուցիչը ի՞նչ պետք է գիտակցի :
44. Որո՞նք են մաթեմատիկայի դասի տիպերը տարրական դպրոցում :

- 45.** Ինչի՞ն է նպաստում ոչ ստանդարտ խնդիրների լուծումը տարրական դպրոցի աշակերտների մոտ:
- 46.** Ինչի՞ն է նպաստում ոչ ստանդարտ և հետաքրքրաշարժ խնդիրների լուծումը տարրական դպրոցի աշակերտների մոտ :
- 47.** Տարրական դասարաններում ուսուցվող երկրաչափական բովանդակությամբ խնդիրները ի՞նչ խմբերի կարելի է բաժանել :
- 48.** Ի՞նչ եղանակներով կարելի է լուծել խնդիրները տարրական դասարաններում : Մեկնաբանել :
- 49.** Ասել բազմապատկման տեղափոխական և զուգորդական հատկությունները, նրանց համատեղ կիրառման օրինակներ :
- 50.** Ասել գումարման տեղափոխական և զուգորդական հատկությունները, նրանց համատեղ կիրառման օրինակներ :
- 51.** Ի՞նչ պետք է անել գումարման և հանման գործողությունները ստուգելու համար :
- 52.** Ի՞նչ պետք է անել բազմապատկման և բաժանման գործողությունները ստուգելու համար :
- 53.** Երկու գումարելիների միաժամանակյա մեծացումը և փոքրացումը մի քանի միավորով : Ասել օրինակներ :
- 54.** Ինչպե՞ս է փոփոխվում տարբերությունը՝ կապված հանելիի փոփոխության հետ :
- 55.** Ինչպե՞ս է փոփոխվում քանորդը՝ կապված բաժանելիի փոփոխության հետ :
- 56.** Ասել թվաբանական գործողությունների իմաստը մեկնաբանող պարզ խնդիրների տեսակներ : Բերել մեկական օրինակ :
- 57.** Ասել թվաբանական գործողությունների անհայտ բաղադրիչը գտնելու վերաբերյալ պարզ խնդիրների տեսակներ : Բերել մեկական օրինակ :
- 58.** Բազմապատկման և բաժանման հատուկ դեպքերի ուսուցումը տարրական դասարաններում :
- 59.** Ի՞նչ պետք է կարողանան աշակերտները “Գումարման և հանման գործողությունների ուսուցումը 21-100 թվերի սահմանում” թեմայի սահմանում :
- 60.** Պարագծի ուսուցման առանձնահատկությունը տարրական դասարաններում :
- 61.** Մակերեսների ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում :
- 62.** Տարրական դպրոցում երկրաչափական կյուբի ուսուցման նպատակները :
- 63.** Ի՞նչ է առանցքային համաչափությունը :
- 64.** Ո՞րն է աշակերտներին կետի և ուղիղ գծի հետ ծանոթացնելու մեթոդիկան :

**65.** Որո՞նք են աշակերտներին հատվածի և բեկյալ գծի հետ ծանոթացնելու մեթոդական առանձնահատկությունները :

**66.** Որո՞նք են բազմանկյան ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում :

**67.** Որո՞նք են ուղղանկյան ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում :

**68.** Ի՞նչ խմբերի են բաժանվում տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթացում ուսուցվող կառուցման խնդիրները :

**69.** <<Կոտորակ>> հասկացության ձևավորման մեթոդական առանձնահատկությունները տարրական դասարաններում :

**70.** Համեմատական մեծությունների հետ կապված խնդիրների տեսակները : Բերել օրինակներ :

**71.** Երկու տարբերությամբ անհայտը գտնելու վերաբերյալ խնդիրների 5 օրինակ բերել և լուծել :

**72.** Ոչ ստանդարտ խնդիրների 5 օրինակ բերել և լուծել :

**73.** Ինչո՞ւ է առաջանում ծիածանը :

**74.** Օրգանների համակարգերի ուսուցման մեթոդիկական տարրական դասարաններում :

**75.** Որո՞նք են մեր պետականության խորհրդանիշները :

**76.** Արդյունաբերությունն թեմայի ուսուցման առանձնահատկությունները <<Ես և շրջակա աշխարհը>> դասընթացում :

**77.** Մշակութային արժեքների ուսուցումը 4-րդ դասարանում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից :

**78.** Ուսումնական գործունեության ի՞նչ տեսակներ կարող են կիրառվել <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից.

**79.** Ինչու՞ էին հին աշխարհի շատ իմաստուններ համոզված, որ գոյություն ունի հարավային մեծ ցամաք :

**80.** Թվարկել Հայաստանի Հանրապետության մարզերը և մարզկենտրոնները :

**81.** Ինչու են կոչվում ազգային –պետական տոներ և որոնք են դրանք :

**82.** Ճիշտ հաղորդակցվելու համար ի՞նչ կարևոր կանոններ պետք է անպայման իմանալ և կիրառել :

**83.** Բնապահպանական տարաբնույթ ի՞նչ միջոցառումներ են անցկացնում աշխարհի երկրները իրար հետ համագործակցելով :

**84.** Ի՞նչ անտեսանելի կապեր գոյություն ունեն բնության մեջ :



- 85.** Թվարկել ֆիզիկոլտուրայի դասի մասերը և նրանց տևողությունը :
- 86.** Որո՞նք են ֆիզիկական կուլտուրայի ուսումնական գործունեության տեսակները .
- 87.** Ի՞նչ հիմնական նպատակ է հետապնդում ընդհանուր զարգացնող վարժությունների կատարումը :
- 88.** Արժեքային համակարգի ինչպիսի՞ դրույթներ պետք է ձևավորվեն տարրական դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասավանդման ժամանակ :
- 89.** Որո՞նք են <<Երաժշտություն>> առարկայի ուսումնական հիմնական նպատակները և խնդիրները :
- 90.** Սովորողների երաժշտական դաստիարակության ուսումնամեթոդական համալիրին ներկայացվող ի՞նչ պահանջներ կան :
- 91.** Ովքե՞ր են Հայաստանի և Արցախի օրհներգերի հեղինակները :
- 92.** Որո՞նք են երաժշտության ուսումնական գործունեության տեսակները :
- 93.** Ո՞րն է կերպարվեստի հենքային բովանդակությունը :
- 94.** Որո՞նք են «Կերպարվեստ» առարկայից աշակերտների ստեղծագործական գործունեության տեսակները :
- 95.** Որո՞նք են <<Կերպարվեստ>> առարկայի ուսումնական հիմնական նպատակները և խնդիրները :
- 96.** Որո՞նք են <<Կերպարվեստ>> առարկայի հիմնական սկզբունքները :
- 97.** Արժեքային համակարգի ինչպիսի՞ դրույթներ պետք է ձևավորվեն տարրական դպրոցում տեխնոլոգիայի դասավանդման ժամանակ :
- 98.** Որո՞նք են «Տեխնոլոգիա» կրթական ոլորտի նպատակները :
- 99.** Որո՞նք են «Տեխնոլոգիա» առարկայի խնդիրները :
- 100.** Ի՞նչ բաժիններ է ընդգրկում տարրական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիրը :

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2015թ
2. Իսկանդարյան Ս. «Կրտսեր դպրոցում մեծությունների ուսուցման մեթոդիկան», «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2010թ
3. Իսկանդարյան Ս. «Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի ընտրովի գլուխներ», «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2010թ

4. Իսկանդարյան Ս. «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը», «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2010թ
5. Իսկանդարյան Ս. «Թվաբանական գործողությունների ուսուցումը կրտսեր դպրոցում», «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2010թ
6. Հովսեփյան Ա. Հովհաննիսյան Գ. «Ես և շրջակա աշխարհը» 4-րդ դասարան. Մանմար, Երևան, 2016թ
7. Հովսեփյան Ա. Հովհաննիսյան Գ. «Ես և շրջակա աշխարհը» 3-րդ դասարան. Մանմար, Երևան, 2016թ
8. Հովսեփյան Ա. Հովհաննիսյան Գ. «Ես և շրջակա աշխարհը» 3-րդ դասարան. Մանմար, Երևան, 2016թ
9. Հովսեփյան Ա. Հովհաննիսյան Գ. «Ես և շրջակա աշխարհը», ՈԲԶ, Մանմար, Երևան, 2012թ
10. «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական չափոչոշիչ և ծրագիր
11. «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական չափոչոշիչ և ծրագիր
12. «Երաժշտություն» առարկայի հանրակրթական չափոչոշիչ և ծրագիր
13. «Ֆիզկուլտուրա» առարկայի հանրակրթական չափոչոշիչ և ծրագիր

### Մաթեմատիկա

1. Երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելու հաշվեկանոնները:
2. Համեմատություններ: Ուղիղ և հակադարձ համեմատական կախումներ: Տոկոսներ:
3. Երկու անհայտով երկու առաջին աստիճանի հավասարումների համակարգերի լուծումը և գրաֆիկական մեկնաբանումը:
4. Իրական թվեր: Ամբողջ ցուցիչով աստիճանի հատկությունները:
5. Քառակուսային եռանդամի վերլուծումը գծային արտադրիչների:
6. Քառակուսային հավասարման լուծումը: Վիետի թեորեմը;
7.  $y=|x|$  ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
8.  $y=\frac{k}{x}$  ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
9.  $y=\sqrt{x}$  ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
10. Քառակուսային ֆունկցիայի գրաֆիկը:
11. Բնական ցուցիչով աստիճանային ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:

12.  $f(x)=x^{1/n}$  ֆունկցիան և նրա հատկությունները:
13. Ցուցչային ֆունկցիա և նրա հատկությունները:
14. Լոգարիթմական ֆունկցիա և նրա հատկությունները:
15. Կոտորակագծային ֆունկցիա և նրա հատկությունները:
16. Սինուս ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
17. Կոսինուս ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
18. Տանգենս ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
19. Կոտանգենս ֆունկցիայի հատկությունները և գրաֆիկը:
20.  $y=f(x)$  ֆունկցիայի գրաֆիկի միջոցով  $y=f(x)+a$  և  $y=f(x+a)$  ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը:
21.  $y=f(x)$  ֆունկցիայի գրաֆիկի միջոցով  $y=af(x)$  և  $y=f(ax)$  ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը:
22.  $y=f(x)$  ֆունկցիայի գրաֆիկի միջոցով  $y=|f(x)|$  և  $y=f(|x|)$  ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը:
23. Ֆունկցիայի պարբերականությունը, զույգությունը և կենտությունը:
24. Ֆունկցիայի մոնոտոնության միջակայքերը և էքստրեմումները:
25. Թվաբանական պրոգրեսիա, նրա բնութագրիչ հատկությունը, ընդհանուր անդամի և առաջին  $n$  անդամների գումարի բանաձևերը:
26. Երկրաչափական պրոգրեսիա, նրա բնութագրիչ հատկությունը, ընդհանուր անդամի և առաջին  $n$  անդամների գումարի բանաձևերը:
27. Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիա: Գումարի բանաձևը:
28. Մեկ անհայտով երկրորդ աստիճանի անհավասարումների լուծումը:
29. Բեզուի թեորեմը:
30. Առաջին և երկրորդ աստիճանի հավասարումների համակարգերի լուծման գրաֆիկական եղանակը (օրինակներով մեկնաբանել):
31. Թվային անհավասարությունների հատկությունները:
32. Թվային արգումենտի եռանկյունաչափական ֆունկցիաների սահմանումը: Հիմնական եռանկյունաչափական նույնությունները: Բերման բանաձևերը;
33. Երկու անկյունների գումարի և տարբերության եռանկյունաչափական ֆունկցիաների բանաձևերը (արտածումներով):
34. Կրկնակի և կես անկյան եռանկյունաչափական ֆունկցիաների բանաձևերը (արտածումներով):
35. Եռանկյունաչափական ֆունկցիաների արտադրյալի և գումարի բանաձևերը:
36. Թվի արկսինուսը և արկկոսինուսը:

37. Թվի արկտանգենսը և արկկոտանգենսը:
38. Պարզագույն եռանկյունաչափական հավասարումների լուծման բանաձևերը:
39. Համասեռ եռանկյունաչափական հավասարումների լուծում:
40.  $a \sin(x) + b \cos(x) = c$  տեսքի հավասարումների լուծումը ( $abc \neq 0$ ):
41. Ցուցչային հավասարումներ:  $a^{2x} + pa^x + q = 0$  և  $c^{2x} + pc^x d^x + qd^{2x} = 0$  տեսքի ցուցչային հավասարումների լուծումը:
42. Ցուցչային անհավասարումներ:
43. Լոգարիթմի սահմանունը և հիմնական հատկությունները:
44. Լոգարիթմական անհավասարումներ:
45. Հաջորդականության սահման,  $e$  թիվը:
46. Ածանցյալ: Երկու ֆունկցիաների գումարի և արտադրյալի ածանցման կանոնները:
47. Երկու ֆունկցիաների քանորդի և բարդ ֆունկցիայի ածանցման կանոնները:
48. Տարրական ֆունկցիաների ածանցյալները:
49. Ֆունկցիայի գրաֆիկի շոշափող: Շոշափողի հավասարումը:
50. ֆունկցիայի մոնոտոնության միջակայքերը գտնելու հաշվեկանոնը:
51. Ֆունկցիայի էքստրեմումները, մեծագույն և փոքրագույն արժեքը տրված միջակայքում:
52. Անհավասարումների լուծման միջակայքերի եղանակը:
53.  $\sqrt{f(x)} = g(x)$  և  $\sqrt{f(x)} = \sqrt{g(x)}$  տեսքի հավասարումների լուծումը:
54.  $\sqrt{f(x)} > g(x)$  և  $\sqrt{f(x)} < g(x)$  տեսքի անհավասարումների լուծումը:
55.  $|f(x)| = |g(x)|$  և  $|f(x)| = g(x)$  տեսքի հավասարումների լուծումը:
56.  $|f(x)| > g(x)$  և  $|f(x)| < g(x)$  տեսքի անհավասարումների լուծումը:
57. Կարգավորություններ:
58. Տեղափոխություններ:
59. Ջուզորդություններ:
60. Նյուտոնի երկանդամը:
61. Ջուզահեռագիծ: Թալեսի թեորեմը: Սեղան:
62. Ուղղանկյուն, շեղանկյուն, քառակուսի:
63. Կենտրոնային և ներգծյալ անկյուններ:
64. Եռանկյան չորս նշանավոր կետերը:
65. Ներգծյալ և արտագծյալ շրջանագծեր:

66. Զուգահեռագծի, եռանկյան և սեղանի մակերեսները:
67. Պութագորասի թեորեմը:
68. Առնչություններ ուղղանկյուն եռանկյան կողմերի և անկյունների միջև:
69. Եռանկյունների նմանության հայտանիշները և հատկությունները:
70. Եռանկյան կիսորդի հատկությունը:
71. Հատվող լարերի հատկությունը:
72. Սինուսների թեորեմը:
73. Կոսինուսների թեորեմը:
74. Հերոնի բանաձևը:
75. Եռանկյան մակերեսի, կողմերի և արտագծյալ շրջանագծի շառավիղի կապը:
76. Կանոնավոր բազմանկյան մակերեսի, նրա կողմերի և ներգծյալ շրջանագծի շառավիղի հաշվման բանաձևեր:
77. Շրջանագծի երկարությունը և շրջանի մակերեսը:
78. Տարածաչափության աքսիոմները: Հետևություններ հարթության տրման եղանակների մասին:
79. Երկու ուղիղների, երկու հարթությունների և ուղղի ու հարթության փոխադարձ դասավորությունները:
80. Քառանիստ և զուգահեռանիստ:
81. Քառանիստի և զուգահեռանիստի հատույթի կառուցումը (դիտարկել դեպքեր):
82. Ուղղի և հարթության ուղղահայացությունը:
83. Երեք ուղղահայացների մասին թեորեմը:
84. Ուղղի և հարթության կազմած անկյունը: Երկնիստ անկյուն:
85. Պրիզմայի հասկացությունը և մակերևույթի մակերեսը:
86. Բուրգ: Կանոնավոր և հատած բուրգ, նրանց մակերևույթների մակերեսները:
87. Ուղիղ շրջանային գլան: Գլանի մակերևույթի մակերեսը:
88. Կոնի հասկացությունը և մակերևույթի մակերեսը: Հատած կոն:
89. Գունդ: Գնդային մակերևույթի մակերես:
90. Ուղիղ և թեք պրիզմայի ծավալը:
91. Գլանի ծավալը:

92. Բուրգի և հատած բուրգի ծավալը:
93. Կոնի և հատած կոնի ծավալը:
94. Գնդի և նրա մասերի ծավալները:
95. Վեկտորի հասկացությունը: Վեկտորների գումարումը և հանումը:
96. Վեկտորի բազմապատկումը թվով: Վեկտորների սկալյար արտադրյալը:
97. Համահարթ և տարահարթ վեկտորներ: Վեկտորի վերլուծումն ըստ տարահարթ վեկտորների;
98. Վեկտորի կոորդինատները: Վեկտորների գումարի, տարբերության, վեկտորի ու թվի արտադրյալի կոորդինատները
99. Վեկտորի մոդուլի և վեկտորների սկալյար արտադրյալի հաշվումը կոորդինատներով:
100. Երկու կետերի հեռավորության բանաձևը: Հատվածի միջնակետի կոորդինատները: Համաչափ կետի կոորդինատները:

Գրականություն՝ գործող դասագրքեր:

## Տիպիկա

1. Ո՞ր շարժումն է կոչվում մեխանիկական: Ի՞նչ է նշանակում լուծել մեխանիկայի հիմնական խնդիրը:
2. Ո՞ր շարժումն է կոչվում պտտական:
3. Ո՞ր շարժումն է կոչվում համընթաց:
4. Տարածության մեջ մարմնի դիրքը տալու քանի՞ եղանակ կա: Թվարկե՛ք այդ եղանակները:
5. Ո՞րն է շառավիղ-վեկտորի՝ ա) ուղղությունը, բ) մեծությունը:
6. Ձևակերպե՛ք արագությունների և տեղափոխությունների գումարման կանոնները:
7. Տվե՛ք իներցիայի օրենքի ձևակերպումը ըստ Արիստոտելի, Գալիլեյի:
8. Տվե՛ք իներցիայի օրենքի ձևակերպումը ըստ Նյուտոնի:
9. Ձևակերպե՛ք Նյուտոնի երկրորդ օրենքը: Գրե՛ք բանաձևը:
10. Ձևակերպե՛ք Նյուտոնի երրորդ օրենքը: Գրե՛ք բանաձևը:
11. Ձևակերպե՛ք տիեզերական ձգողության օրենքը: Գրե՛ք բանաձևը:
12. Գրե՛ք ծանրության ուժի արագացման բանաձևը Երկրի մակերևույթին և Երկրի մակերևույթից բարձրության վրա:
13. Որո՞նք են գիտական իմացության մեթոդները:
14. Ի՞նչն են անվանում շարժման օրենք: Որո՞նք են նշված օրենքի տրման ձևերը:
15. Ձևակերպե՛ք Հուկի օրենքը: Գրե՛ք բանաձևը:

16. Ո՞ր բանաձևով են որոշում համասեռ գլանաձև ձողի  $k$  կոշտության կախումը նրա  $L_0$  երկարությունից, լայնական հատույթի  $S$  մակերեսից և նյութի առանձգականության  $E$  մոդուլից:
17. Ո՞րն է տիեզերական ձգողության հաստատունը, ինչի՞ է հավասար, և ո՞րն է նրա ֆիզիկական իմաստը:
18. Ի՞նչն են անվանում մարմնի կշիռ: Ինչի՞ է հավասար մարմնի կշիռը, երբ  $a < g, a > g, a = g$ :
19. Ի՞նչն են անվանում մարմնի կշիռ: Գրե՛ք բանաձևը:
20. Ի՞նչն են անվանում դադարի շփման ուժ: Շփման ուժի տեսակները: Գրե՛ք բանաձևը:
21. Ի՞նչն է կոչվում ծանրության ուժ: Գրե՛ք բանաձևը:
22. Ձևակերպե՛ք համուղղված ուժերի համագործ որոշելու կանոնը:
23. Թվարկե՛ք հավասարակշռության տեսակները և տվե՛ք դրանց սահմանումները:
24. Որո՞նք են հաստատուն ուժի աշխատանքի երեք հատկությունները:
25. Ձևակերպե՛ք լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը: Գրե՛ք բանաձևը:
26. Ձևակերպե՛ք իմպուլսի պահպանման օրենքը: Գրե՛ք բանաձևը:
27. Ո՞ր մեծությունն է կոչվում ուժի իմպուլս, որը՝ մարմնի իմպուլս: Գրե՛ք բանաձևերը:
28. Ո՞ր տատանումներն են կոչվում ներդաշնակ:
29. Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ պետք է նետել մարմինը, որպեսզի տրված սկզբնական արագության դեպքում նրա թռիչքի հեռավորությունը լինի առավելագույնը: Օդի դիմադրությունը անտեսել:
30. Ե՞րբ է մարմինը կատարում հավասարաչափ շրջանագծային շարժում:
31. Ի՞նչ անկյուն են կազմում հետագծի տվյալ կետում արագությունը և արագացումը շրջանագծային շարժման դեպքում:
32. Թեք հարթության ի՞նչ առավելագույն անկյան դեպքում նրա վրա դադարի վիճակում խորանարդը չի շրջվի:
33. Անհրաժեշտ է փորել  $H$  խորությամբ ջրհոր: Փորելիս ի՞նչ խորության վրա կկատարվի պահանջվող ամբողջ աշխատանքի կեսը:
34. Արտահայտե՛ք ուժի, աշխատանքի, հզորության և իմպուլսի միավորները ՄՀ-ի հիմնական միավորներով:
35. Ո՞ր օրենքն է ընկած ռեակտիվ շարժման հիմքում:
36. Ձևակերպե՛ք Բոյլ-Մարիոտի օրենքը: Գրե՛ք բանաձևը:
37. Գծե՛ք իզոթերմ պրոցեսում գազի ճնշման՝ ծավալից կախումն արտահայտող գրաֆիկը:
38. Ձևակերպե՛ք Գեյ-Լյուսակի օրենքը: Գրե՛ք բանաձևը:
39. Գծե՛ք իզոթերմ պրոցեսում գազի ծավալի՝ ջերմաստիճանից կախումն արտահայտող գրաֆիկը:
40. Ձևակերպե՛ք Շառլի օրենքը: Գրե՛ք բանաձևը:
41. Գծե՛ք իզոթերմ պրոցեսում գազի ճնշման՝ ջերմաստիճանից կախումն արտահայտող գրաֆիկը:
42. Ձևակերպե՛ք ջերմադինամիկայի առաջին օրենքը:
43. Իդեալական գազի վիճակի հավասարումից ստացե՛ք Բոյլ-Մարիոտի, Գեյ-Լյուսակի, Շառլի օրենքների բանաձևերը:
44. Ո՞րն է գազային ունիվերսալ հաստատունի արժեքը և չափայնությունը:

45. Գրե՛ք Մենդելեև-Կլապեյրոնի հավասարումը:
46. Ջրի շոքեգոյացման տեսակարար ջերմությունը 2,3 Ջ/կգ է: Ի՞նչ է նշանակում այդ պնդումը:
47. Ձևակերպե՛ք Կուլոնի օրենքի բանաձևից  $k$  համեմատական գործակցի ֆիզիկական իմաստը, արժեքը և չափայնությունը ՄՀ-ի հիմնական միավորներով:
48. Ձևակերպե՛ք էլեկտրական դաշտերի վերադրման սկզբունքը:
49. Ո՞ր դաշտերն են կոչվում պոտենցիալային:
50. Տվե՛ք պոտենցիալի սահմանումը:
51. Գրե՛ք E լարվածությամբ համասեռ դաշտում  $q$  լիցքի տեղափոխման ժամանակ դաշտի կատարած աշխատանքի բանաձևը:
52. Գրե՛ք համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածության և պոտենցիալների կապն արտահայտող բանաձևը:
53. Ո՞ր մեծությունն են անվանում հոսանքի ուժ: Գրե՛ք բանաձևը:
54. Ձևակերպե՛ք Օհմի օրենքը շղթայի տեղամասի համար: Գրե՛ք բանաձևը:
55. Ձևակերպե՛ք Օհմի օրենքը լրիվ շղթայի համար: Գրե՛ք բանաձևը:
56. Ձևակերպե՛ք Ջոուլ-Լենցի օրենքը: Արտածե՛ք օրենքն արտահայտող բանաձևը:
57. Ո՞ր մեծությունն են անվանում էլեկտրաշարժ ուժ: Ի՞նչ միավորով է արտահայտվում:
58. Ի՞նչ նպատակով են օգտագործում կիսահաղորդչային դիոդը:
59. Ինչու՞ ջերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:
60. Ձևակերպե՛ք Ֆարադեյի օրենքն էլեկտրոլիզի համար:
61. Ի՞նչ բանաձևով կարելի է որոշել տարրական լիցքի մեծությունը՝ ելնելով Ֆարադեյի օրենքից:
62. Ո՞ր մեծությունն է կարելի հաշվել՝ իմանալով Ֆարադեյի և Ավոգադրոյի հաստատունները:
63. Ո՞ր բանաձևն է արտահայտում կոնդենսատորի էլեկտրաունակության սահմանումը:
64. Գրե՛ք լիցքավորված հարթ կոնդենսատորի շրջադիրների միջև ստեղծված համասեռ էլեքտրական դաշտի էներգիայի խտության բանաձևը:
65. Ո՞ր մեծությունն են անվանում առանձնացված հաղորդչի էլեկտրաունակություն:
66. Ձևակերպե՛ք վերադրման սկզբունքը մագնիսական դաշտերի համար:
67. Ձևակերպե՛ք էլեկտրամագնիսական մակածման օրենքը:
68. Գրե՛ք տատանողական կոնտուրում էլեկտրամագնիսական տատանումների լրիվ էներգիայի բանաձևը:
69. Ո՞ր երևույթն են անվանում ինքնամակածում:
70. Շրջանակում մակածվում է հաստատուն էլՇՈւ: Ժամանակից կախված ի՞նչ օրենքով է նրա մեջ փոխվում մագնիսական հոսքը:
71. Ձևակերպե՛ք Ամպերի օրենքը: Գրե՛ք բանաձևը:
72. Ո՞ր ուժն են անվանում Լորենցի ուժ: Արտածե՛ք Լորենցի ուժի բանաձևը:
73. Ձևակերպե՛ք Լենցի կանոնը:
74. Ձևակերպե՛ք խցանահանի կանոնը ուղղագիծ հոսանքի համար:
75. Ձևակերպե՛ք լույսի անդրադարձման օրենքը:
76. Ի՞նչ պայմանի դեպքում է անդրադարձումը հայելային:
77. Ձևակերպե՛ք լույսի բեկման օրենքը: Գրե՛ք օրենքն արտահայտող բանաձևը:



78. Ձևակերպե՛ք Հյուլգենսի սկզբունքը:
79. Ո՞ր մեծությունն են անվանում ալիքի ճառագայթման ուժգնություն: Ինչպե՞ս է այն կախված տատանման հաճախությունից, ո՞րն է նրա չափայնությունը ՄՀ-ի հիմնական միավորների համակարգում:
80. Ի՞նչ պնդումներ են ընկած հարաբերականության հատուկ տեսության հիմքում: Գրե՛ք Այնշտայնի բանաձևը:
81. Ո՞ր ռեակցիան է կոչվում ջերմամիջուկային:
82. Ո՞ր ռեակցիան է կոչվում միջուկային:
83. Ո՞ր ռեակցիան է կոչվում շղթայական:
84. Ո՞ր երևույթն են անվանում ռադիոակտիվություն:
85. Գրե՛ք ֆոտոնի էներգիայի և իմպուլսի կապն արտահայտող բանաձևը:
86. Ձևակերպե՛ք Բորի կանխադրույթները:
87. Որո՞նք են միջուկային ուժերի հատկությունները:
88. Ո՞ր երևույթն է կոչվում ֆոտոէֆեկտ:
89. Ո՞ր օրենքն է արտահայտվում Այնշտայնի բանաձևը ֆոտոէֆեկտի համար:
90. Ո՞ր ճառագայթումն ունի առավել ներթափանցման հատկություն:
91. Ո՞ր մասնիկի համամասնիկն է պոզիտրոնը:
92. Ի՞նչ է  $\alpha$  – ճառագայթումը:
93. Ի՞նչ է  $\beta$  – ճառագայթումը:
94. Ի՞նչ է դասերի են բաժանվում հադրոնները:
95. Ի՞նչ մասնիկներից է կազմված նեյտրոնը:
96. Ի՞նչ մասնիկներով էր ռմբակոծվում ատոմը Ռեզերֆորդի փորձերում:
97. Ինչպե՞ս են հարաբերում բարձրացնող տրանսֆորմատորի առաջնային և երկրորդային փաթույթների գալարների  $N_1$  և  $N_2$  թվերը:
98. Ի՞նչ երևույթի վրա է հիմնված տրանսֆորմատորի աշխատանքը:
99. Ո՞ր երևույթն է հաստատուն լույսի ալիքի լայնական լինելը:
100. Լույսի արագությունը վակուումում  $c$  է, իսկ միջավայրում  $v$ : Որքա՞ն է այդ միջավայրի բեկման ցուցիչը:


Գրականություն՝ գործող դասագրքեր:

### ՔԻՄԻԱ

1. Ատոմի կառուցվածքը և պարբերական օրենքը:
2. Իզոտոպներ:
3. Որո՞նք են միջուկային ռեակցիաները:
4. Ի՞նչ է ատոմային օրբիտալը: Քվանտային թվեր:
5. Որո՞նք են քիմիական կապի տեսակները: Իոնային կապ:
6. Որո՞նք են կովալենտային կապի տեսակները:
7. Ի՞նչ է վալենտականությունը և օքսիդացման աստիճանը:

8. Ի՞նչ է հիբրիդացումը: Մուլեկուլների տարածական կառուցվածքը:
9. Ինչպիսի՞ն է էլեկտրոնային շերտերի կառուցվածքը: Քիմիական տարրերի ատոմներում e-ի լրացման սկզբունքները:
10. Տալ պարբերական համակարգի և տարրերի հասկացությունները /*միջուկի լիցքը, իոնացման էներգիայի էլեկտրաբացասականության*/ մասին:
11. Տալ կովալենտային կապի առաջացման մեխանիզմը /*փոխանակային և դոնորակցեպտորային եղանակ*/:
12. Ներկայացնել կովալենտ կապի հատկությունները:
13. Ներկայացնել ջրածնային և մետաղային կապերը:
14. Որո՞նք են նյութի ֆիզիկական վիճակները:
15. Որո՞նք են նյութի գազային վիճակները: Ավոգադրոյի օրենքը:
16. Ո՞րն է գազի վիճակի հավասարումը:
17. Ներկայացնել լուծույթների լուծելիությունը, լուծված նյութերի զանգվածային բաժնի մասին:
18. Որո՞նք են մաքուր նյութերը և խառնուրդները: Խառնուրդ-բաժանման եղանակները:
19. Ի՞նչ է դիսպերս համակարգերը:
20. Ի՞նչ գիտեք մոլային կոնցետրացիա և մոլային բաժին հասկացության մասին:
21. Որո՞նք են քիմիական ռեակցիաների դասակարգումը:
22. Ի՞նչ է քիմիական հավասարումը:
23. Ի՞նչ հասկացություն է քիմիական ռեակցիայի ջերմություն ասելը:
24. Ո՞րն է քիմիական ռեակցիայի արագությունը:
25. Որո՞նք են քիմիական ռեակցիայի արագության գործակիցները:
26. Ի՞նչ է կատալիզը: Համասեռ, տարասեռ:
27. Որո՞նք են դարձելի ռեակցիաները: Քիմիական հավասարակշռություն:
28. Ո՞րն է քիմիական հավասարակշռության տեղաշարժը, Լե Շատելիեի սկզբունքը:
29. Ի՞նչ է էլեկտրոլիտային դիսոցման տեսությունը: Էլեկտրոլիտներ, ոչ էլեկտրոլիտներ:
30. Ի՞նչ է դիսոցման աստիճանը:
31. Տալ թթուրների, հիմքերի, աղերի ընդհանուր բնութագիրը ըստ էլեկտրոլիտային դիսոցման տեսության:
32. Նշել իոնափոխանակային ռեակցիաների մասին :
33. Ներկայացրեք աղերի հիդրոլիզը /օրինակով/:
34. Որո՞նք են օքսիդացման-վերականգնման ռեակցիաները:
35. Բնութագրել էլեկտրոլիզի գործընթացը /օրինակով/:
36. Տալ հալոգենների ընդհանուր բնութագիրը, ստացումը:
37. Քլոր, հատկությունը, ստացումը:
38. Ի՞նչ է հալոգենաջրածինները: Գրել դրանց հայտնաբերման ռեակցիաները:
39. Ո՞րն է հալոգենների կենսաբանական նշանակությունը: Տալ ալոտրոպիա հասկացությունը, մեկնաբանումը:
40. Թթվածին և օզոն: Տալ հատկությունները:
41. Տալ ոչ մետաղ՝ ծծմբի հատկությունները:

42. Որո՞նք են ծծմբական թթվի հատկությունները և ստացման եղանակները:
43. Ազոտ: Հատկությունները, օքսիդները:
44. Ամոնիակ: Ստացումը և հատկությունները:
45. Տալ ազոտական թթվի հատկությունը և ստացման եղանակները:
46. Ազոտական թթվի վերականգնման արգասիքները մետաղների հետ ռեակցիայում:
47. Տալ ֆոսֆորական թթվի հատկությունները և ստացումը::
48. Ածխածնի տարաձևությունները:
49. Պարզաբանեք ածխածնի հատկությունները:
50. Պարզաբանեք ածխածնի օքսիդները:
51. Ածխաթթվի աղերը:
52. Պարզաբանեք սիլիցիումի ստացումը և քիմիական հատկությունները:
53. Որոնք են սիլիկատները: Ապակի:
54. Պարզաբանել մետաղների ընդհանուր բնութագիրը, ֆիզիկական հատկությունները:
55. Ի՞նչ երևույթ է կոռոզիան /կերամաշում/:
56. Ո՞րն է ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները:
57. Որո՞նք են մետաղների ստացման եղանակները:
58. Ինչ է շղթայական ռեակցիաները:
59. Ո՞րն է քիմիական կապի բնույթը, օրգանական միացությունները:
60. Ի՞նչ է իզոմերիա:
61. Ի՞նչ օրգանական միացություններ գիտեք, ո՞րն է ալկանները՝ հոմոլոգիական շարքը և հատկությունները:
62. Ո՞րն է ալկանների ստացման եղանակները:
63. Ո՞րն է ցիկլոալկաններ, ստացումը և հատկությունները:
64. Որո՞նք են չհագեցած ածխաջրածինները՝ ալկենները և ո՞րն է հոմոլոգիական շարքը, իզոմերիան, ստացումը:
65. Ալկենների քիմիական հատկությունը՝ էպօքսիդացում, հիդրօքսիդացում և այլն:
66. Հասկացություն բարձրամոլեկուլային միացությունների մասին:
67. Ո՞րն է դիենային ածխաջրածինները, իզոմերիան, ստացումը:
68. Դիենային ածխաջրածինների քիմիական հատկությունները:
69. Ի՞նչ նյութեր են կաուչուկները: Բերել օրինակներ:
70. Ալկիններ: Ացետիլեն: Քիմիական հատկությունները և ստացումը:
71. Ո՞րն է բենզոլի քիմիական հատկությունները և ստացումը:
72. Որո՞նք է բենզոլի հոմոլոգները, անվանակարգը:
73. Պարզաբանեք ծագումնաբանական կապը ածխաջրածինների միջև: Գրեք ռեակցիայի հավասարումները:





74. Ինչպիսի՞ նավթանյութեր կան:
75. Ի՞նչ է նավթի կրեկինգը, ինչով են տարբերվում թորման, ջերմային և կատալիզված բենզինները իրարից:
76. Ի՞նչ է ածխաջրածինների արումատացումը:
77. Ինչպիսի՞ միատոմ սպիրտներ գիտեք: Իզոմերիան, անվանակարգումը:
78. Ո՞րն է բազմատոմ սպիրտների քիմիական հատկությունները:
79. Ո՞րն է սահմանային միատոմ սպիրտների ստացման եղանակները:
80. Էթիլեն-գլիկոլ և գլիցերին: Ստացումը:
81. Ամիններ: Հոմոլոգիական շարքը և հատկությունները:
82. Ինչ նյութ է ֆենոլը և ինչ քիմիական հատկություն ունի և որն է ֆենոլի ստացման եղանակները:
83. Ո՞ր օրգանական միացություններին են պատկանում ալդեհիդները, ստացումը և քիմիական հատկությունները:
84. Նշեք պոլիմերացման և պոլիկոնդենսացման ռեակցիաների մասին:
85. Որո՞նք են կարբոնաթթուները, դրանց դասակարգումը և անվանակարգումը:
86. Որո՞նք են բարձր հազեցած և չհազեցած միաշաղկապ կարբոնաթթուների ներկայացուցիչները:
87. Անիլին: Ստացումը:
88. Ի՞նչ նյութեր են ճարպերը և որ ռեակցիան են անվանում էսթերների օձառացում:
89. Որոնք են էսթերները և որն է էսթերացման ռեակցիաները:
90. Ինչ օրգանական միացություններ են համարվում ածխաջրերը, դասակարգումը, անվանակարգը:
91. Որո՞նք են միաշաղկապները, ստացումը, հատկությունները:
92. Որո՞նք են երկշաղկապները:
93. Որո՞նք են բազմաշաղկապները:
94. Ո՞րն է բջջանյութի քիմիական հատկությունները:
95. Ներկայացրեք ամինները, իզոմերիան:
96. Ներկայացրեք ամինների ստացումը, քիմիական հատկությունները:
97. Ո՞րն է ամինաթթուների իզոմերիան և անվանակարգը:
98. Ի՞նչ միջդասային իզոմերներ գիտեք:

99. Ո՞ր նյութերն ունեն  $C_nH_{2n}O_2$  ընդհանուր բանաձևը: Բերել օրինակներ:  
100.Գրեք  $C_4H_8O_2$  ընդհանուր բանաձև ունեցող օրգանական միացությունների կառուցվածքային բանաձևերը:

Գրականություն՝ գործող դասագրքեր:

### ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ է ուսումնասիրում էկոլոգիան:
2. Էկոլոգիական գործոնների դասակարգման ինչ մոտեցումներ են Ձեզ հայտնի:
3. Որ երևույթները և փոփոխությունները կարելի է անվանել պարբերական:
4. Ինչ է կենսացենոզը և բիոտոպը:
5. Տվեք պոպուլյացիայի սահմանումը:
6. Ինչ է էկոհամակարգերը: Որոնք են պրոդուցենտները և կոնսումենտները և ռեդուցենտները և ինչ նշանակություն ունեն էկոհամակարգում:
7. Ինչ է սննդային շղթան: Նկարագրեք դետրիտային և արոտային սննդային շղթան:
8. Ինչ է էոլգիական բուրգը և բուրգերի ինչ տեսակների գիտեք:
9. Ինչով են իրարից տարբերվում բնական էկոհամակարգերը և ագրոցենոզները:
10. Ինչ է կենսոլորտը:
11. Ինչ ֆունկցիաներ է կատարում կենդանի նյութը:
12. Ինչ է նյութերի շրջապտույտը /նկարագրեք C և N-ի շրջապտույտը/:
13. Ինչ է միջտեսակային, ներտեսակային մրցակցությունը, մակաբուծությունը:
14. Նկարագրեք կոոպերացիան, կոմենսալիզմը, ամենսալիզմը, մուտուալիզմը, սիմբիոզը, միկոռիզան:
15. Ինչ է մակաբուծությունը և ինչ խմբերի են դասակարգվում:
16. Ինչ է բնական պաշարները և ինչպես են դրանք դասակարգվում:
17. Ինչու են սնկերն ընդգրկվել առանձին թագավորության մեջ:
18. Որոնք են միաբջջ կենդանիները և ինչպես են բազմանում:
19. Թվարկեք ժամանակակից բջջային տեսության հիմնադրույթները:
20. Ինչպիսիսն է տարբեր բջջներում քիմիական տարրերի բաղադրությունը:
21. Ինչ դեր է ջուրը կատարում բջջում:
22. Թվարկեք բջջի օրգանական նյութերը:
23. Ինչ են ածխաջրերը, ածխաջրերի ինչ խմբեր գիտեք և որոնք են ածխաջրերի ֆունկցիաները:

24. Ինչ են լիպիդները, ինչ լիպիդներ գիտեք, որոնք են լիպիդների ֆունկցիաները:
25. Ինչ է կենսաբանական պոլիմերները, բերեք օրինակներ:
26. Ինչ կառուցվածք ունեն ամինաթթուները:
27. Սպիտակուցների ինչ հատկություններ գիտեք:
28. Ինչ նշանակություն ունի սպիտակուցների բնափոխման դարձելի լինելը:
29. Թվարկեք սպիտակուցների ֆունկցիաները բջջում:
30. Ինչ են ֆերմենտները, ինչ դեր են կատարում:
31. Ինչ նուկլեինաթթուներ կան բջջում: Ինչով են դրանք տարբերվում իրարից:
32. Ինչ նուկլեոտիդներ գիտեք:
33. Ինչու է ՌՆԹ կառուցվածքի տարբերությունը ԴՆԹ-ի կառուցվածքից:
34. ՌՆԹ-ի ինչ տեսակներ գիտեք: Որն է դրանց դերը բջջում:
35. Ինչ կառուցվածք ունի ԱԵՖ-ը: Որ կապն է կոչվում մակրոերգիկ, քանի այդպիսի կապ կա ԱԵՖ-ի մոլեկուլում:
36. Բջջում արդյոք ԱԵՖ-ը պահեստավորվում է, ինչպես է լրացվում նրա ծախսը:
37. Ինչ վիտամիններ գիտեք: Որն է դրանց նշանակությունը մարդու օրգանիզմում:
38. Որ բջիջներն են կոչվում նախակորիզավոր, որոնք են կորիզավոր:
39. Ինչ է բջջաթաղանթն, ինչից է այն կազմված:
40. Ինչ կառուցվածք ունի բջջաթաղանթը: Նկարագրեք պինոցիտոզը և ֆագոցիտոզը:
41. Ինչ է իրենից ներկայացնում բջջի (կորիզավոր) ցիտոպլազման:
42. Նկարագրեք էնդոպլազմային ցանցի և ռիբոսոմների կառուցվածքն ու ֆունկցիաները:
43. Ինչ կառուցվածք ունի Գոլջիի ապարատը և ինչ ֆունկցիաներ է այն կատարում բջջում:
44. Ինչ գիտեք վակուոլների, լիզոսոմի մասին:
45. Նկարագրեք միտոքոնդրիումների, բջջային կենտրոնի, պլաստիդների կառուցվածքն ու ֆունկցիաները:
46. Ինչպիսի կառուցվածք ունի բջջակորիզը:
47. Բնութագրեք նախակորիզավոր բջիջը:
48. Նկարագրեք ՌՆԹ-ի կենսասինթեզը՝ տրանսկրիպցիան:
49. Ինչպես է տեղի ունենում սպիտակուցների կենսասինթեզը ռիբոսոմում, տրանսլյացիան:
50. Ինչու են վիրուսները կյանքի ոչ բջջային ձևեր համարվում:
51. Բնութագրեք պլաստիկ և էներգիական փոխանակությունները:
52. Ինչպիսի ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմներ գիտեք:
53. Համեմատեք թթվածնային և անթթվածին ճեղքումները:
54. Ինչ գործընթաց է ֆոտոսինթեզը: Ինչ է տեղի ունենում լուսային և մթնային փուլերում:
55. Ինչ է քեմոսինթեզը: Բերեք քեմոսինթեզող օրգանիզմների օրինակներ:

